Հավելված 1
ԵՊՀ ռեկտորի 08-11 2023 թ. 214/211-2 հրամանի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ԵՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի (հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող պրոֆեսոր և դոցենտ՝ բոլորը միասին՝ այսուհետ պրոֆեսոր) օգնականը (այսուհետ՝ պրոֆեսորի օգնական) պրոֆեսորին դասընթացը վարելուն օժանդակելու համար ներգրավվող և սույն կարգով սահմանված չափանիշներին բավարարող անձն է:

2. Պրոֆեսորի օգնականը ներգրավվում է պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով:

3. Պրոֆեսորի օգնական կարող է լինել՝

1) համապատասխանող մասնագիտացմամբ ԵՊՀ մագիստրատուրայի ուսանողը (այսուհետ՝ ուսանող),

2) համապատասխանող մասնագիտացմամբ ԵՊՀ ասպիրանտը (այսուհետ՝ ասպիրանտ):

4. Պրոֆեսորի օգնականը ներգրավվում է մեկ ուսումնական կիսամյակով՝ կրթագիտական ստորաբաժանման գիտական խորհրդի որոշմամբ, համապատասխան ամբիոնի երաշխավորության հիման վրա:

5. Ուսանողի կամ ասպիրանտի կողմից մինչև ուսումնական տարվա ավարտն ուսումնառությունը կիսատ թողնելու դեպքում նոր պրոֆեսորի օգնականը ներգրավվում է մինչև ուսումնական կիսամյակի ավարտին մնացած ժամկետով:

6. Պրոֆեսորի օգնական դառնալու համար դիմում ներկայացնելու հնարավորության, դրա կարգի և ժամկետների մասին իրազեկումը կատարվում է ուսանողների և ասպիրանտների պաշտոնական էլեկտրոնային փոստին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

7. Պրոֆեսորի օգնական դառնալու համար սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահանջներին բավարարող անձը գրավոր դիմում է ներկայացնում համապատասխան ամբիոնին՝ իրեն որպես պրոֆեսորի օգնական ներգրավելու համար: Դիմումները ներկայացվում են ուսումնական կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում:

8. Ամբիոնը անձին որպես պրոֆեսորի օգնական ներգրավելու երաշխավորություն տալու հարցը 5 օրյա ժամկետում քննարկում է ամբիոնի նիստում:

9. Ֆակուլտետի գիտական խորհուրդը պրոֆեսորի օգնական ներգրավելու մասին որոշումը կայացնում է 15-օրյա ժամկետում կրթագիտական ստորաբաժանման գիտական խորհրդի նիստում:

10. Եթե պրոֆեսորի օգնական դառնալու համար սույն կարգի 3-րդ կետում նշված չափանիշներին բավարարող անձանց թիվը մեկից ավելին է, ամբիոնի երաշխավորությամբ ընտրությունը կատարում է գիտական խորհուրդը:

11. Յուրաքանչյուր պրոֆեսոր կարող է ունենալ միայն մեկ օգնական, ով գործում է նրա անմիջական հսկողության ներքո:

12. Պրոֆեսորի օգնականը.

1) տվյալ դասընթացի թեմաների շրջանակներում արտալսարանային խորհրդատվություն է իրականացնում առնվազն շաբաթական մեկ անգամ՝ դասերից դուրս,

2) պրոֆեսորին օգնում է վարել ուսուցման կառավարման էլեկտրոնային համակարգի էջերը, ստուգում գործնական հանձնարարությունները,

3) կարող է ընդգրկվել ինքնուրույն հանձնարարությունների, ստուգողական հանձնարարությունների, ընթացիկ քննությունների հանձնարարությունների, թեստերի պատրաստման աշխատանքներում,

4) կարող է ընդգրկվել է հետազոտական աշխատանքներում, համատեղ գիտական հոդվածների պատրաստման և այլ գիտական աշխատանքներում,

5) աջակցում է ուսումնական ծրագրերի, նկարագրիչների և նույնաբնույթ այլ փաստաթղթերի մշակմանը,

6) պրոֆեսորի հետ համատեղ, ինչպես նաև ինքնուրույն մշակում է գործնական պարապմունքների համար ուսումնական առաջադրանքների նախագծերը,

7) մասնակցում է ուսանողների գրավոր զեկույցների և նույնաբնույթ այլ գործնական աշխատանքների ստուգման աշխատանքներին, այդ թվում՝ գործնական պարապմունքների ընթացքում,

8) աջակցում է ուսումնական անհրաժեշտ նյութը ԵՊՀ համապատասխան կայքերում տեղադրելու աշխատանքներին,

9) Կատարում է իր գործառույթներից բխող այլ հանձնարարություններ:

13. Պրոֆեսորի օգնականի գործառույթների կատարումը ասպիրանտի համար կարող է դիտարկվել որպես մանկավարժական պրակտիկա:

14. Պրոֆեսորի օգնականի գործառույթների կատարումն ուսանողի համար կարող է դիտարկվել որպես մասնագիտական պրակտիկա՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) առանձնահատկությունների հաշվառմամբ: